## ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

# ԿՈՄԻՏԱՍԻ ՍՐԻՆԳԸ

Այս նուրբ սրինգը հնչեց մի աստղային երեկոյ,
Հովերի հետ անրջեց մի աստղային երեկոյ:

Արագածի ձիւների վրաններից վար իջած
Աղբիւրներով կարկաչեց մի աստղային երեկոյ:

Այս սրնգի մրմունջով քնքուշ հոգում հայունու
Սիրոյ վարդը բողբոջեց մի աստղային երեկոյ:

Հայոց վշտի ուռենուց կտրած այս սուրբ սրնգով
Հայի հոգին հառաչեց մի աստղային երեկոյ:

Վտարանդի եղբայրըս իր վէրքերի արիւնով
Օտար դաշտերը թրջեց մի աստղային երեկոյ:

Այս սրնգի օրօրով կապոյտ քարվա՛նը դարձի
Անուշ-անուշ ղօղանջեց մի աստղային երեկոյ:

ԱՇՈՏ ԳՐԱՇԻ

digitised by A.R.A.R.@